

# ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## ԽՈՐՀՈՒՐԴ

### ՈՐՈՇՈՒՄ

12 նոյեմբերի 2014 թվականի

թիվ 107

քաղ. Մոսկվա

#### **«Ծխախոտային արտադրանքի մասին տեխնիկական կանոնակարգ»**

#### **Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի մասին**

«Եվրասիական տնտեսական հանձնաժողովի մասին» 2011 թվականի նոյեմբերի 18-ի պայմանագրի 3-րդ հոդվածին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհուրդը **որոշեց**.

1. Ընդունել կցվող «Ծխախոտային արտադրանքի մասին տեխնիկական կանոնակարգ» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգը (ՄՄ ՏԿ 035/2014):

2. Սահմանել, որ «Ծխախոտային արտադրանքի մասին տեխնիկական կանոնակարգ» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգը (ՄՄ ՏԿ 035/2014) ուժի մեջ է մտնում 2016 թվականի մայիսի 15-ից:

3. Մաքսային միության եւ Միասնական տնտեսական տարածքի անդամ պետությունների առողջապահության նախարարություններին՝ եռամսյա ժամկետում մշակել Մաքսային միության եւ Միասնական տնտեսական տարածքի անդամ պետությունների տարածքներում չծխելու ծխախոտային արտադրատեսակների արտադրության, ներմուծման եւ շրջանառության արգելքի մասին միջազգային պայմանագիր նախապատրաստելու հարցը:

4. Սահմանել, որ մինչեւ սույն Որոշման 3-րդ կետով նախատեսված

միջազգային պայմանագիրն ընդունելը՝ Մաքսային միության եւ Միասնական տնտեսական տարածքի անդամ պետությունների տարածքներում չծխելու ծխախոտային արտադրատեսակների արտադրությունը, ներմուծումն ու շրջանառությունն իրականացվում են Մաքսային միության եւ Միասնական տնտեսական տարածքի անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

5. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 30 օրացուցային օրը լրանալուց հետո:

**Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի անդամներ՝**

<b>Բելառուսի Հանրապետությունից</b>	<b>Ղազախստանի Հանրապետությունից</b>	<b>Ռուսաստանի Դաշնությունից</b>
<b>Ս. Ռումաս</b>	<b>Բ. Սազինտաեւ</b>	<b>Ի. Շուվալով</b>